ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N2.134
Ծածկագիրը՝ ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18

ք. Երևան «26» հուլիսի 2018թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մարտշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված աշխատանքների նկարագրով և N 1.1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.09.2018թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների

անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **14 700 000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ,** որից **2 450 000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը**՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է,

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում

պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի

լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մարտշին» ՍՊԸ
ք.Երևան, Նորք 2-րդ նրբ.,տուն 17
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ
«Մաշտոց» մ/ճ
Հ/Հ 16043022733200
ՀՎՀՀ 01534233
Տնօրեն

_____**Մ.Հարությունյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
«26» հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի
2.139

«Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» կատարման

Աշխատանքների նկարագիր

Գնման առարկա է հանդիսանում <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները
1.Գնման առարկայի բնութագիր՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքը գտնվում է Ի. Գասպարյան 33 հասցեում, <<Զվարթնոց>> մ/օ-ի տարածքում: Աշխատանքները ներառում են <<Հայաէրոնավիգացիա>> վարչական շենքում գտնվող առաջին, երկրորդ, երրորդ հարկերում կարգավարական աշտարակում և բրիֆինգի հատվածքում գտնվող սանհանգույցներում սան-սարքերի և աքսեսուարների փոխարինում նորով, մուտքի դռան փոխարինում թրծված ապակուց 12մմ հաստությամբ դռով, մուտքի աստիճանավանդակի բազալտե բռնակների փոխարինում ալյումինե բռնակներով, դեպի մուտք տանող բազալտե քայքայված հարթակի իրականացում նոր բազալտե երեսապատման սալիկներով, տանիքի հակասառեցման համակարգի իրականացում ողջ պարագծով, ինչպես նաև նկուղային հարկում գտնվող կենտրոնական պահեստի և ջեռուցման կարգավորման հանգույցի վերանորոգում: Վերանորոգման աշխատանքները կատարվելու են վերահսկվող տարածքում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող անձնակազմը պետք է ենթարկվի ռեժիմային գործող կարգ ու կանոններին մինչև սույն աշխատանքների ավարտը:
Շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:Նյութերի ապահովումն իրականացվում է կապալառուի ուժերով:

Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է սույն պայմանագրի N 1.1 հավելվածում:

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝ ք.Երևան, Ի. Գասպարյան 33, «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մարտշին» ՍՊԸ
ք.Երևան, Նորք 2-րդ նրբ.,տուն 17
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ
«Մաշտոց» մ/ճ
Հ/Հ 16043022733200
ՀՎՀՀ 01534233
Տնօրեն

_____**Մ.Հարությունյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 26 » հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի
2.134

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների
Ծավալաթերթ-նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /դրամ.դրամ/	ընդհանուր արժեքը /դրամ.դրամ/
1	3	4	5	6	7
	Նկուղային հարկ՝ կենտրոնական պահեստ				
1	Յուղաներկի քերում պատերից	մ²	25.10	0.127	3.2
2	Սոսնձաներկի քերում պատերից	մ²	22.92	0.127	2.9
3	Առաստաղից սոսնձաներկի մաքրում	մ²	19.95	0.127	2.5
4	Լինոլեումի հատակի քանդում	մ²	19.950	0.120	2.4
5	Ցեմենտասվազային հարթեցնող շերտի քանդում	մ²	19.95	0.310	6.2
6	Ցեմենտ ավազե հարթեցնող շերտ[a] 30մմ հաստ.	մ²	19.95	1.139	22.7
7	Վինիլային հատակի պատրաստում	մ²	19.95	14.160	282.5
8	ՄԴՖ-ից շրիշակների տեղադրում	գմ	17.40	0.801	13.9
9	Մետաղական դռան յուղաներկի մաքրում	մ²	8.800	0.949	8.4

10	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում	մ²	8.800	0.948	8.3
11	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ²	4.000	1.906	7.6
12	Պատերի յուղաներկում H=1.5մ	մ²	25.100	0.960	24.1
13	Պատերի ներկում լատեքսային ներկով	մ²	22.92	1.149	26.3
14	Առաստաղի ներկում լատեքսային ներկով	մ²	19.950	1.256	25.1
	Նկուղային հարկ՝ արհեստանոց				
1	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակի ապամոնտաժում	մ	5.300	0.149	0.8
2	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d110մմ փորձարկումով	մ	5.300	1.166	6.2
3	Եռաբաշխիչի տեղադրում 110*110*110	հատ	1.000	1.761	1.8
4	Եռաբաշխիչի տեղադրում 110*50*110	հատ	2.000	1.639	3.3
5	Արմունկ Φ110մմ	հատ	1.000	1.075	1.1
6	Մետաղապլաստե խողովակների տեղադրում հիդրավլիկ փորձարկումով, լվացում և ախտահանում d=25մմ	մ	12.0	2.045	24.5
7	Մետաղական կախովի լվացարանի տեղադրում սիֆոնով և այլ աքսեսուարներով, չժանգոտվող մետաղից, մետաղական հենակներով	հատ	1.000	29.453	29.5
	Ջեռուցման կարգավորման հանգույց				
1	Ջեռուցման խողովակների ապամոնտաժում d100-d150	մ	14.100	0.472	6.7

2	Սողնակային փականների ապամոնտաժում	հատ	6	1.624	9.7
3	Ջեռուցման խողովակաշարի անցկացում պողպատե էլ. եռակցումային խողովակներից Φ102x4մմ	գմ	7.50	5.449	40.9
4	Ջեռուցման խողովակաշարի անցկացում պողպատե էլ. եռակցումային խողովակներից Φ159x4մմ	գմ	6.00	8.366	50.2
5	Պողպատե արմունկ 90', Dy100x4, 5հատ	տն	0.0160	930.924	14.9
6	Պողպատե արմունկ 90', Dy150x4.5, 1հատ	տն	0.0061	930.924	5.7
7	Խցափակիչ մետաղական թիթեղով 4մմ	մ2	0.10	16.411	1.6
8	Պողպատե սողնակների տեղադրում Φ200մմ /ЗД32ч29рЛМ/	հատ	4	125.483	501.9
9	Պողպատե սողնակների տեղադրում Φ250մմ /ЗД32ч29рЛМ/	հատ	2	182.187	364.4
10	Փական Φ50մմ	հատ	1.000	14.378	14.4
11	Մետաղական խողովակների յուղաներկում ջերմակայուն ներկով	մ2	5.000	0.995	5.0
12	Պողպատե խողովակների հիդրավլիկ փորձարկում, մինչեւ 200մմ տրամագծով	գմ	13.50	0.085	1.1
13	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	1.38	1.229	1.7
	Մուտքի հատված				
1	Բազալտե սալիկների քանդում	մ2	23.000	0.358	8.2
2	Բետոնե հարթաշերտի քանդում	մ3	1.400	13.994	19.6

3	Գրունտի մշակում ձեռքով՝3-րդ կարգ /տաշտաձև/	մ3	2.30	1.769	4.1
4	Խճի նախաշերտի իրականացում ե/բ սալի տակ,10 սմ	մ3	2.3	11.278	25.9
5	Երկաթբետոնե սալի իրականացում,10 սմ	մ3	2.300	36.077	83.0
6	Φ12A500c 150քայլով ցանցի արժեքը 1մ2-2,5կգ	տն	0.058	326.700	18.9
7	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	մ^2	25.4	1.652	42.0
8	Բետոնե հարթեցնող շերտի տեղադրում 3 սմ հաստությամբ	մ3	0.690	36.077	24.9
9	Բազալտե 4 սմ հաստությամբ սալիկներից հատակի իրականացում	մ2	23.00	13.600	312.8
10	Ծխատարի մետաղական խողովակի երկշերտ յուղաներկում մինչև 15 մ բարձրությամբ	մ2	12.000	0.948	11.4
11	Ավտոաշտարակի աշխատանք	ժամ	8.000	6.655	53.2
12	Ծխատարի մետաղական խողովակի բետոնե հիմքի վերանորոգումB15 բետոնով	մ3	0.220	36.077	7.9
13	Պատուհանների մետաղական ճաղաշարի հին յուղաներկի մաքրում	մ^2	52.000	0.949	49.4
14	Պատուհանների մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում՝գույնը համաձայնեցնելով պատվիրատուի հետ	մ2	52.000	0.948	49.3
15	Մուտքի երկփեղկ դռան ապամոնտաժում	մ^2	5.88	0.996	5.9
16	Թրծած ապակուց 12մմ հաստ.դռների	մ^2	5.88	97.419	572.8

	տեղադրում երկողմանի բացվող,/նեռարյալ բռնակներ փական/				
17	Աստիճանների բազալտե բռնածողի ապամոնտաժում	մ	8.400	0.238	2.0
18	Բազրիկի մետաղական ցանկապատումի հավաքակցում	տ	0.025	63.169	1.6
19	Պողպ. խողովակ 80x80x3.0մմ	գմ	3.40	3.188	10.8
20	Պողպ. խողովակների երկշերտ յուղաներկում	մ2	1.10	0.948	1.0
21	Խողովակների ամրացման համար բետոնի մեջ անցքերի բացում	հատ	5	3.152	15.8
22	Անցքերի մասնակի վերականգնում բետոնով	մ3	0.020	71.645	1.4
23	Աստիճանների ալյումինե բռնածողի տեղադրում	մ	8.500	20.657	175.6
24	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	10.00	1.229	12.3
	Տանիքի մասնակի վերանորոգում և հակասառեցման համակարգի իրականացում				
1	Ջրահեռացման խողովակի ձագարի փոխարինում նորով	հատ	1.000	4.732	4.7
2	Ջրհորդանի քանդում՝ առանց փայտանյութի	$մ^2$	8.000	0.081	0.6
3	Ջրհորդանի իրականացում՝ 1 մ լայն. ,0.55մմ հաստությամբ թիթեղով ՝առանց փայտանյութի	մ	8.000	7.653	61.2
4	Տանիքը տաքացնող սպիրալ	մ	1065.000	3.901	4154.8
5	Մետաղական ճկախողովակ լարի համար	մ	200.000	1.028	205.5

6	ՊՊԲ 3x2.5մմ2 հատվածքով, բազմաջիղ պղնձե լարերով հաղորդալարի անցկացում	մ	640.000	0.459	294.0
7	Ավտոմատ անջատիչների տուփ 12 տեղանոց	հատ	1.000	14.954	15.0
8	Ավտոմատ անջատիչ,16 Ա	հատ	10.000	3.810	38.1
9	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	0.08	1.229	0.1
	Բրիֆինգի սրահ				
1	Զուգարանակոնքի ապամոնտաժում	կ-տ	2.000	0.494	1.0
2	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.000	0.400	0.8
3	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	կ-տ	2.000	74.080	148.2
4	Կերամիկական լվացարարանների տեղադրում, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	2.000	30.925	61.8
5	Լվացարանի ծորակ- խառնիչի տեղադրում՝բարձրորակ	հատ	2.000	6.420	12.8
6	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի, հեղուկ օճառի դիսպենսերի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	7.914	15.8
7	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	2.940	1.906	5.6
8	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	2.000	2.045	4.1
9	Օդափոխիչների տեղադրում կախովի	հատ	2.000	9.041	18.1

	առաստաղում				
10	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED /9-12 Վտ/	հատ	6.0	2.593	15.6
11	Ջրակայուն փայտից պահարան-տումբայի տեղադրում դարակներով ,0.35*0.45*0.77(h)	հատ	2.000	28.812	57.6
12	Հիգիենիկ ցնցուղի ապամոնտաժում	հատ	2.000	1.097	2.2
13	Հիգիենիկ ցնցուղի տեղադրում՝բարձրորակ,եվրոպական արտադրության	հատ	2.000	27.500	55.0
14	Մետաղապլաստե խողովակների ապամոնտաժում	.Ս	16.0	0.373	6.0
15	Մետաղապլաստե խողովակների տեղադրում փորձարկումով, լվացում և ախտահանում d=16մմ	մ	16.0	1.747	28.0
16	Փականների տեղարում 1/2"	հատ	5.000	3.289	16.4
17	Ճկախողովակի տեղադրում	հատ	4.000	1.672	6.7
18	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	2.000	0.464	0.9
19	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	2.000	5.808	11.6
20	էլ. ջրատաքացուցիչի ապամոնտաժում	հատ	1.000	4.447	4.4
21	էլ ջրատաքացուցիչի տեղադրում ամբողջական կոմպլեկտով	հատ	1.000	98.039	98.0
22	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7
	Դիսպեչերական աշտարակ				

1	Մակերևույթների հին ներկի մաքրում	մ^2	11.20	0.127	1.4
2	Մակերևույթների ներկում ջրակայուն լատեքսային ներկով	մ^2	11.20	1.149	12.9
3	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1.000	0.400	0.4
4	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	1.000	34.581	34.6
5	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	1.000	0.494	0.5
6	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	1.000	74.080	74.1
7	Հայելու ապամոնտաժում	հատ	1.000	0.142	0.1
8	Հայելի	հատ	1.000	5.573	5.6
9	Հիգիենիկ ցնցուղի ապամոնտաժում	հատ	1.000	1.097	1.1
10	Հիգիենիկ ցնցուղի տեղադրում,եվրոպական արտադրության,բարձրորակ	հատ	1.000	27.500	27.5
11	Հեղուկ օճառի դիսպենսեր	հատ	1.000	4.459	4.5
12	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի, տեղադրում՝բարձրորակ	հմլ	1.000	3.455	3.5
13	Եվրո դռան փական,բռնակ	հատ	1.000	5.573	5.6
14	Ալյումինե պատուհանի վերանորոգում	հատ	1.000	9.962	10.0

15	Ալյումինե պրոֆիլով պաատուհանի ապակու փոխարինում նորով 0.8*0.9մ 0.4մմ հաստությամբ	մ2	0.720	6.355	4.6
16	Օդափոխիչի տեղադրում ապակու վրա	հատ	1.000	9.041	9.0
17	Խոհանոցակոնքի խառնիչի տեղադրում բարձրորակ	հատ	1.000	5.623	5.6
18	Ճկափող Φ15մմ,	հատ	2	0.281	0.6
19	Փականների տեղարում 1/2"	հատ	2	3.289	6.6
	ՕԵԿ դիսպետչերական աշտարակի առաջին հարկ				
1	Ալյումինե ջեռուցման մարտոցների ապամոնտաժում 5 հատ 38 սեկցիա	հատ	5.000	0.798	4.0
2	Ալյումինե ջեռուցման մարտոցների տեղադրում 5 տեղ 38 սեկցիա՝	էկմ	10.270	0.562	5.8
3	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	հատ	38.000	4.425	168.2
4	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	5.000	1.393	7.0
5	Մարտկոցի զույգ կախիչ	հատ	5.000	0.465	2.3
6	Ջրթող փական	հատ	5.000	4.029	20.1
7	Հետադարձ գծի առբերիչ լրիվ պտույտով	հատ	5.000	2.787	13.9
8	Ձեռքի կարգավորման առբերիչ	հատ	5.000	1.895	9.5

9	d50 մետաղական խողովակի ապամոնտաժում	մ	2.000	0.472	0.9
10	d50 մետաղական խողովակի տեղադրում	մ	2.000	0.713	1.4
11	Փականի ապամոնտաժում d50	հատ	2.000	0.764	1.5
12	Փականի տեղադրում d50, Kaldo	հատ	2.000	10.578	21.2
13	Ֆիլտրի ապամոնտաժում	հատ	2.000	0.744	1.5
14	Ֆիլտրի տեղադրում	հատ	2.000	9.223	18.4
15	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	0.03	1.229	0.0
	Վարչական շենքի առաջին հարկ				
	Տղամարդկանց զուգարան				
1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	12.6	0.759	9.6
2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	$մ^2$	12.60	9.083	114.4
3	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0.236	1.4
4	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED /9-12 Վտ/	հատ	6.0	2.593	15.6
5	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	2.000	0.494	1.0

6	Միզամանի ապամոնտաժում	հատ	2.000	0.662	1.3
7	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.000	0.400	0.8
8	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2
9	Կախովի բարձրորակ միզամանի տեղադրում /ջրի դատարկումը սեղմովի կոճակով/	հատ	2.000	40.320	80.6
10	Միզամանների կերամիկական բաժանարար միջնորմի տեղադրում	հատ	1.000	22.293	22.3
11	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	2.000	34.581	69.2
12	Հայելու ապամոնտաժում	հատ	2.000	0.142	0.3
13	Հայելու տեղադրում	հատ	2.000	5.573	11.1
14	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	4.236	8.5
15	Հեղուկ օճառի դիսպենսեր	հատ	1.000	4.459	4.5
16	Ձեռքերի չորացման սարքի տեղադրում, բարձրորակ, եվրոպական արտադրության	հատ	1.000	40.459	40.5
17	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5
18	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
19	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	6.000	0.464	2.8

20	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	6.000	5.808	34.8
21	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7
22	Ապակիների հանում և նորի տեղադրում՝0.7*0.35, 2 հատ	մ2	0.490	6.355	3.1
23	Պատուհանի պրոֆիլի մեջ տեղադրվող հակամիջատային ցանց իր շրջանակով 0.35*0.05	հատ	2.000	8.193	16.4
	կանանց զուգարան				
1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	6.95	0.759	5.3
2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	մ^2	6.95	9.083	63.1
3	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	2.000	0.494	1.0
4	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.000	0.400	0.8
5	Լուսատուների ապամոնտաժում	հատ	4	0.236	0.9
6	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED / 9-12 Վտ/	հատ	4.0	2.593	10.4
7	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2
8	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	2.000	34.581	69.2
9	Հայելու ապամոնտաժում	հատ	2.000	0.142	0.3

10	Հայելու տեղադրում	հատ	2.000	5.573	11.1
11	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	4.236	8.5
12	Հեղուկ օճառի դիսպենսեր	հատ	1.000	4.459	4.5
13	Ձեռքերի չորացման սարքի տեղադրում	հատ	1.000	40.459	40.5
14	Ապակիների հանում և նորի տեղադրում՝0.7*0.35, 2 հատ	մ2	0.490	6.355	3.1
15	Պատուհանի պրոֆիլի մեջ տեղադրվող հակամիջատային ցանց իր շրջանակով 0.35*0.05	հատ	2.000	8.193	16.4
16	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5
17	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
18	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7
19	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	4.000	0.464	1.9
20	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	4.000	5.808	23.2
21	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	0.10	1.229	0.1
	Վարչական շենք երկրորդ հարկ				
	Տղամարդկանց զուգարան				

1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	12.6	0.759	9.6
2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	$մ^2$	12.60	9.083	114.4
3	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0.236	1.4
4	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED / 9-12վտ/	հատ	6.0	2.593	15.6
5	Զուգարանակոնքի ապամոնտաժում՝	հմլ	2.000	0.494	1.0
6	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2
7	Միզամանի ապամոնտաժում	հատ	2.000	0.662	1.3
8	Կախովի բարձրորակ միզամանի տեղադրում /ջրի դատարկումը սեղմովի կոճակով/	հատ	2.000	40.320	80.6
9	Միզամանների կերամիկական բաժանարար միջնորմի տեղադրում	հատ	1.000	22.293	22.3
10	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.000	0.400	0.8
11	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	2.000	34.581	69.2
12	Հայելու ապամոնտաժում	հատ	2.000	0.142	0.3
13	Հայելու տեղադրում	հատ	2.000	5.573	11.1
14	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	4.236	8.5

15	Հեղուկ օճառի դիսպենսեր	հատ	1.000	4.459	4.5
16	Ձեռքերի չորացման սարքի տեղադրում	հատ	1.000	40.459	40.5
17	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5
18	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
19	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7
20	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	6.000	0.464	2.8
21	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	6.000	5.808	34.8
22	Ապակիների հանում և նորի տեղադրում՝0.7*0.35, 2 հատ	մ2	0.490	6.355	3.1
23	Պատուհանի պրոֆիլի մեջ տեղադրվող հակամիջատային ցանց իր շրջանակով	հատ	2.000	8.193	16.4
24	Ջրակայուն փայտից պահարան-տումբայի տեղադրում դարակներով ,0.4*0.4*0.85(h)	հատ	2.000	22.293	44.6
25	Պատի կերամիկական սալիկների անկյունակի տեղադրում	մ	2.000	1.742	3.5
26	Պատի կերամիկական սալիկների տեղադրում՝համապատասխանեցնելով գույնը գոյություն ունեցողի հետ	$մ^2$	0.50	8.300	4.2
	կանանց զուգարան				
1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	6.95	0.759	5.3

2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	$մ^2$	6.95	9.083	63.1
3	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	2.000	0.494	1.0
4	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.000	0.400	0.8
5	Լուսատուների ապամոնտաժում	հատ	4	0.236	0.9
6	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED /9-12Վտ/	հատ	4.0	2.593	10.4
7	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2
8	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	2.000	34.581	69.2
9	Հայելու ապամոնտաժում	հատ	2.000	0.142	0.3
10	Հայելու տեղադրում	հատ	2.000	5.573	11.1
11	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	4.236	8.5
12	Ձեռքերի չորացման սարքի տեղադրում	հատ	1.000	40.459	40.5
13	Ապակիների հանում և նորի տեղադրում՝0.7*0.35, 2 հատ	մ2	0.490	6.355	3.1
14	Պատուհանի պրոֆիլի մեջ տեղադրվող հակամիջատային ցանց իր շրջանակով	հատ	2.000	8.193	16.4
15	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5

16	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
17	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7
18	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	4.000	0.464	1.9
19	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	4.000	5.808	23.2
20	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	0.10	1.229	0.1
	3-րդ հարկ Սանհանգույց 1, 3 հատ , աջակողմյան հատված				
1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	12.8	0.759	9.7
2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	մ^2	12.80	9.083	116.3
3	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0.236	1.4
4	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED /9-12Վտ/	հատ	6.0	2.593	15.6
5	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	2.000	0.494	1.0
6	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2
7	Լվացարանի ապամոնտաժում	հատ	3.000	0.400	1.2
8	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ	հատ	3.000	34.581	103.7

	համարժեք				
9	Հիգիենիկ ցնցուղի տեղադրում՝բարձրորակ,եվրոպական արտադրության	հատ	2.000	27.500	55.0
10	Լոգարանի ցնցուղի տեղադրում, բոլոր աքսեսուարներով	հատ	1.000	28.465	28.5
11	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5
12	Փայտե ապակեպատ դռների փայտե մասերի երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	5.720	1.906	10.9
13	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
14	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	5.000	6.242	31.2
15	Օդափոխիչի տեղադրում ապակու վրա	հատ	1.000	9.041	9.0
16	Շինաղբի հավաքում,դուրս բերում բարձում ձեռնով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տն	0.10	1.229	0.1
	3-րդ հարկ Սանհանգույց 2, Զախակողմյան հատված				
1	Մետաղական կմախքով կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	11.0	0.759	8.3
2	Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի իրականացում մետաղական հիմնակմախքի պատրաստումով, սպիտակ փոշեներկված	$մ^2$	11.00	9.083	99.9
3	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0.236	1.4
4	Կախովի առաստաղի կլոր լուսատուների տեղադրում ՝LED , /9-12 Վտ/	հատ	6.0	2.593	15.6
5	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հմլ	2.000	0.494	1.0
6	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով, TAORMINA եվրոպական արտադրությանկամ համարժեք	հմլ	2.000	74.080	148.2

7	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1.000	0.400	0.4
8	Կերամիկական լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը, FLORENCE եվրոպական արտադրության կամ համարժեք	հատ	1.000	34.581	34.6
9	Խոհանոցակոնքի ապամոնտաժում	հատ	1.000	0.796	0.8
10	Խոհանոցակոնքի տեղադրում իր պահարանով՝ ծորակ-խառնիչով՝ բարձրորակ	հատ	1.000	31.260	31.3
11	Հայելու ապամոնտաժում	հատ	1.000	0.142	0.1
12	Հայելու տեղադրում	հատ	1.000	5.573	5.6
13	Օճառամանի,զուգարանի թղթի կախիչի, խոզանակի կախիչի տեղադրում՝բարձրորակ	հմլ	2.000	4.236	8.5
14	Ձեռքերի չորացման սարքի տեղադրում	հատ	1.000	40.459	40.5
15	Հոսակի ցանցի տեղադրում	հատ	1.000	0.669	0.7
16	Փայտե դռների երկշերտ յուղաներկում հին ներկի մաքրումով	մ2	11.280	1.906	21.5
17	Փայտե դռների մասնակի վերանորոգում	հատ	3.000	2.045	6.1
18	Ջրի փականի ապամոնտաժում	հատ	7.000	0.464	3.2
19	Ջրի բրոնզե փականի տեղադրում՝ուղիղ 1/2	հատ	7.000	5.808	40.7
20	էլ. ջրատաքացուցիչի ապամոնտաժում	հատ	1.000	4.447	4.4
21	էլ ջրատաքացուցիչի տեղադրում ամբողջական	հատ	1.000	98.039	98.0

	կոմպլեկտով				
22	Դռան աքսեսուարների /բռնակի, կողպեքի/ տեղադրում	հմլ	3.000	6.242	18.7

Ընդամենը /հազ. դր./ 12250.0

ԱԱՀ 20% 2450.0

Ընդամենը /հազ. դր./ 14700.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մարտշին» ՍՊԸ
ք.Երևան, Նորք 2-րդ նրբ.,տուն 17
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ
«Մաշտոց» մ/ճ
Հ/Հ 16043022733200
ՀՎՀՀ 01534233
Տնօրեն

_____**Մ.Հարությունյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«26» հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի
2.134

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները	30.07.2018թ.	30.09.2018թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		30.07.2018թ.	30.09.2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____ **Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մարտշին» ՍՊԸ
ք.Երևան, Նորք 2-րդ նրբ.,տուն 17
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ
«Մաշտոց» մ/ճ
Հ/Հ 16043022733200
ՀՎՀՀ 01534233
Տնօրեն

_____ **Մ.Հարությունյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«26» հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի
2.134

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/4	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները	14700000	14700000	14700000	14700000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____ **Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մարտշին» ՍՊԸ
ք.Երևան, Նորք 2-րդ նրբ.,տուն 17
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ
«Մաշտոց» մ/ճ
Հ/Հ 16043022733200
ՀՎՀՀ 01534233
Տնօրեն

_____ **Մ.Հարությունյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » հուլիսի 2018թ. կնքված
N պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն